ՆԱԽԱԳԻԾ - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«__» հուլիսի 2011թ. N ___-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով, 28-րդ կետի 2-րդ ենթակետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի N162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Մոլդովական փողոցի հ.29/5 շենքի հ.101 օժանդակ տարածքը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 25.06.2008թ. հ.2556503 վկայական/ անհատույց օտարել /նվիրել/ Մարիամ Էդուարդի Հովհաննիսյանին /անձնագիր՝ AE0218242, տրված 05.02.1999թ. 011-ի կողմից/։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մոլդովական փողոցի հ.29/5 շենքի հ.101 օժանդակ տարածքը 2008 թվականին վարձակալության իրավունքով տրամադրվել է քաղաքացի Մարիամ Էդուարդի Հովհաննիսյանին և կնքվել է ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման 29.07.2008թ. հ.2561062 վկայական)։

Քննարկվող տարածքը գտնվում է հանրակացարանային շենքում, մինչ օրս փաստացի օգտագործվում է Մարիամ Էդուարդի Հովհաննիսյանի և նրա ընտանիքի կողմից, սակայն քանի որ քննարկվող հատվածը տրամադրված է որպես օժանդակ տարածք, ապա քաղաքացիները հաշվառվելու և մասնավորեցնելու հնարավորություն չեն ունեցել։

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Երևանի թաղային համայնքների սեփականություն համարվող գույքը սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան համայնքին։

Քաղաքացու ընտանիքի բնակարանային հարցը լուծելու համար անհրաժեշտություն է առաջացել նախապատրաստել է Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող օժանդակ տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման նախագիծ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող օժանդակ տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող տարածքն անհատույց օտարելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող օժանդակ տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ